

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գոհար Գրիգորյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Արդարադատությունը կարող է կայացած համարվել, եթե կատարվում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտը: Այս կարևորագույն խնդիրը լուծելու նպատակով՝ շատ երկրների քաղաքացիական դատավարության օրենսդրությանը հայտնի է իրավահարաբերության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության այնպիսի արդյունավետ և գործունե երաշխիք, ինչպիսին *հայցի ապահովման ինստիտուտը* (այսուհետ՝ նաև *ինստիտուտ*) է:

Դատավարագետները, անդրադառնալով հայցի ապահովման ինստիտուտին, դրան տվել են տարբեր սահմանումներ: Այսպես, ըստ սահմանումներից մեկի՝ հայցի ապահովումը բնութագրվում է որպես դատարանի կողմից օրենքով նախատեսված դատավարական միջոց, որի նպատակն է հարուցված հայցը բավարարվելու դեպքում երաշխիքներ ապահովել ապագա վճռի կատարման համար¹: Իրավագետ Է. Մ. Մուրադյանի կարծիքով՝ հայցի ապահովումը միջճյուղային դատավարական ինստիտուտ է, որը նախատեսում է դատարանի կողմից հայցվորի նախաձեռնությամբ համապատասխան դատավարական կանոններին համաչափ միջոցների ձեռնարկում՝ ուղղված դատական ակտի իրագործմանը, կատարմանը, եթե հայցը բավարարվի: Բացի այդ, նա ավելացնում է, որ այն դատավարական հարկադրանքի միջոց է²:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (*այսուհետ՝ ՀՀ ՔՂՕ*) 130-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է պարունակի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին³:

Սույն հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման հարցը որոշելիս դատարանը պարտավոր է առաջին հերթին քննարկել հետևյալ երկու հարցերը՝ արդյո՞ք ներկայացված միջնորդությունը պարունակում է նշում հայցի ապահովման միջոցի մասին, և երկրորդ՝ արդյո՞ք միջնորդությունը բովանդակում է բավարար հիմնավորումներ նման միջոցի կիրառման անհրաժեշտության մասին: Այսինքն, ըստ էության, օրենսդիրը որևէ նորմ չի սահմանել նման միջոցների ընդունման վերաբերյալ ոչ ապացուցման գործընթացի և ոչ էլ ապացուցման միջոցների մասին:

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Երևան, «Ռսկան Երևանցի», 2012, էջ 262:

² Տե՛ս **Мурадян Э.**, Арбитражный процесс, Москва, издательство Тихомирова М.Ю., 2004, էջ 163:

³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018, ուժի մեջ է մտել 09.04.2018, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ. 208:

Վերը նշված հոդվածի երկրորդ հատվածը, այն է՝ նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին, կարծում ենք, որևէ պրակտիկ խոչընդոտ չի կարող առաջացնել, քանի որ ՀՀ ՔՂԾ-ի 129-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է դատարանի կողմից դատավարության մասնակցի միջնորդության հիման վրա հայցի ապահովման միջոցների սպառիչ ցանկ: Սակայն նույնը չենք կարող պնդել քննարկվող հոդվածի առաջին պայմանի մասին, այն է՝ *հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումները*:

Մեր առջև դրված խնդիրները արդյունավետ և համակարգային լուծելու տեսանկյունից գտնում ենք, որ նախ և առաջ անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե արդյոք ներկայացվող միջնորդության մեջ բավարար է միայն որոշակի հիմնավորումների գրավոր շարադրանք ներկայացնելը, թե բոլոր դեպքերում օրենսդիրը «հիմնավորումներ» եզրույթի տակ նկատի է ունեցել նաև որոշակի ապացուցման գործընթացի տարրեր:

Փորձենք նշված խնդրի լուծման ուղիները փնտրել բացատրական բառարանում: Այսպես, «հիմնավորում» նշանակում է «պատճառաբանելու համար բերվող փաստարկ, պատճառ կամ հանգամանք»¹:

Հարկ է նկատել, որ նշված հարցը միանշանակ չի ընկալվում դատավարագետների շրջանում. գիտնականների մի մասը գտնում է, որ անհրաժեշտ է միջնորդության մեջ հիմնավորումների ներկայացումը, մյուս մասը կարծում է, որ խոսքը նման միջոցների ընդունման հիմնավորվածության ապացուցման մասին է:

Ապացուցման առարկան ավանդաբար կազմում են այն իրավաբանական փաստերը, որոնք անհրաժեշտ են հայցի ապահովման միջոցներ ընդունելիս: Գրականության մեջ առավել տարածված է «ապացուցման լոկալ առարկա» եզրույթը: Առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել այս եզրույթի հասկացությունը, որի մասին տեսական աղբյուրներում տեղ են գտել տարբեր մոտեցումներ: Այսպես, Ն. Ն. Տկաչևայի կարծիքով՝ ապացուցման լոկալ առարկան ներառում է ոչ միայն խնդրարկվող միջոցների ընդունման անհրաժեշտության մասին հանգամանքների մատնանշումը, այլև **հայցային պահանջների հիմնավորվածությունը**²: Իսկ Ա. Յա. Լվովը ապացուցման լոկալ առարկայի մեջ անպայմանորեն ներառում է հետևյալ իրավաբանական փաստերը՝ հայցի ապահովման միջոցների կիրառման մասին հիմնավորումները, դիմողի կողմից նման միջնորդություն ներկայացնելու շարժառիթը, տվյալ միջոցի ընդունման նպատակաուղղվածությունը կոնկրետ գործի շրջանակում:

Գրականության մեջ հակառակ տեսակետն են առաջ քաշել Մ. Ս. Ֆալկովիչը և Մ. Ա. Տիմոնովը, ովքեր նշում են, որ հայցի հիմնավորվածությունը չի կարող ներառվել ապացուցման լոկալ առարկայի մեջ, և միջնորդությունը քննության առնելիս դատարանը չպետք է ուշադրություն դարձնի նշված հանգամանքի վրա: Նրանց կարծիքով՝ նախքան դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտի ընդունումը դատարանը պետք է ելնի հայցի հիմնավորվածության կանխավարկածից՝ գնահատելով միայն միջնորդության հիմնավորվածությունը և ոչ թե բուն հայցի հիմնավորվածությունը³:

¹ Տե՛ս **Էդուարդ Բագրատի Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976, հատոր 1, էջ 871:

² Տե՛ս **Ткачева Н.**, Проблемы обеспечения иска в гражданском судопроизводстве (по материалам практики), дисс. канд. юрид. наук, Саратов, 2004, էջ 41:

³ Տե՛ս **Львов Я.**, Особенности применения арбитражными судами обеспечительных мер по делам, возникающим из административных и иных публичных правоотношений, дисс. канд. юрид. наук, Саратов, 2005, էջ 178-179, ինչպես նաև **Тимонов М.**, Особенности применения обеспечительных мер в арбитражном процессе, дисс. канд. юрид. наук, Санкт-Петербург, 2006, էջ 102-103:

Մենք գտնում ենք, որ չնայած հայցի ապահովման միջոցների ընդունման պայմանները սահմանելիս օրենսդիրը չի սահմանել դատարանի պարտականությունը գնահատելու ներկայացված հայցի առերևույթ (prima facie) հիմնավորվածությունը, սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև նշված հանգամանքի վրա՝ բացառելու ակնհայտ անհիմն ներկայացված հայցապահանջների շրջանակներում միջնորդությունների բավարարումը: Կարծում ենք, որ այն դեպքում, երբ հայցային պահանջները ակնհայտ անհիմն են, հայցի ապահովման միջոցների ընդունման հանգամանքը, ինչ ապացույցներով էլ որ ամրացված լինի, նույնպես կլինի չհիմնավորված: Անհրաժեշտ է նշել նաև հետևյալը. հայցի ապահովման կիրառման հիմքը **հայց բավարարող վճռի չկատարման բարձր հավանականությունն է**, որը կախված է մի շարք գործոններից և այդ թվում՝ հայցի բավարարման հավանականությունից: Կերջինս էլ, իր հերթին, կախված է հայցի առերևույթ հիմնավորվածությունից:

Չենք կարող համաձայնել այն հեղինակների տեսակետի հետ, ովքեր գտնում են, որ պետք է ելնել հայցի հիմնավորվածության կանխավարկածից, քանի որ, մեր համոզմամբ, նշված մոտեցումը հակասում է քաղաքացիական դատավարության անկյունաքարային սկզբունքներին՝ կողմերի մրցակցությանը և իրավահավասարությանը: Ցանկանում ենք առանձնահատուկ ընդգծել, որ խոսքն այս դեպքում չի վերաբերում ներկայացված ապացույցները բազմակողմանի գնահատելու հարցին, քանի որ նման դեպքում դատարանի վրա կդրվեր շատ մեծ և միևնույն ժամանակ չհիմնավորված բեռ, սակայն ներկայացված ապացույցների վերաբերելիության հարցը քննարկելը, կարծում ենք, և՛ հնարավոր է, և՛ անհրաժեշտ:

Ուստի որպես առերևույթ (prima facie) ակնհայտ անհիմն՝ մեր կարծիքով պետք է գնահատել այն հայցերը, երբ իրավունքի և օրենքի ուժով հայց ներկայացնելու իրավունքը վերապահված է ոչ թե հայցվորին, այլ մեկ այլ անձի, ինչպես նաև երբ հայցը ներկայացված է ոչ պատշաճ պատասխանողի դեմ: Նշված պայմանի կիրառումը դատական պրակտիկայում կարևորում ենք այն տեսանկյունից, որ կբացարձի նման հայցադիմումների ներկայացումը, կբարձրացվեն կողմի պատասխանատվությունը և զգոնությունը, ներկայացված գործի շրջանակներում կդրսևորվի առավել բարեխիղճ վարքագիծ, որն էլ իր հերթին կխթանի դատավարական իրավունքների չարաշահման դեպքերի մվազումը: Հակառակ պարագայում, վստահ լինելով, որ միայն հիմնավորված միջնորդությունը բավարար է հայցի ապահովման միջոցներ կիրառելիս, շատ դեպքերում կբախվենք ակնհայտ անհիմն հայցերով հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին բավարարված միջնորդությունների:

Մյուս հարցը, որը հեղինակների մեծամասնության կարծիքով ևս կանխորոշում է ընդունված միջոցների արդյունավետությունը, այն հանգամանքները ապացուցելու պարտականությունն է, որի վրա հիմնված է ներկայացված միջնորդությունը: Դատավարազետների մեծ մասի կարծիքով՝ հայցի ապահովման միջոցների ընդունման անհրաժեշտությունը պետք է պատճառաբանվի և հիմնավորվի դիմողի կողմից, բայց ապացուցումը պարտադիր չէ: Սակայն հեղինակների մյուս խումբը կարծում է, որ հայցի ապահովման միջոցների ընդունման անհրաժեշտությունը պետք է ոչ միայն հիմնավորվի, այլ նաև ապացուցվի նրանց կողմից:

Սույն հարցի շրջանակներում հետաքրքիր է Ռուսաստանի Դաշնության արբիտրաժային օրենսդրության մեջ առկա մոտեցումը, որի համաձայն՝ հայցի ապահովման մասին միջնորդությունը պետք է պարունակի հիմնավորում նման միջնորդության ներկայացման պատճառների և շարժառիթների մասին, ինչպես նաև տվյալ փաստարկները հիմնավորող փաստաթղթերի ցանկը: Բացի այդ, նշված մոտեցումը

հաստատվել է Ռուսաստանի Ղաշնության Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումի կողմից և¹:

Հաշվի առնելով քննարկվող ինստիտուտին բնութագրական անհապաղության հատկանիշը՝ հետաքրքրական է Գերմանիայում գործող մոդելը: Գերմանական իրավունքին հայտնի «Glaubhaftmachung» ինստիտուտի էությունը այն է, որ դիմողը պարտավոր չէ դատարանին ապացուցել բոլոր իրավաբանական փաստերի առկայությունը: Իրավունքների նախնական պաշտպանության միջոցների ընդունման անհրաժեշտությունը համարվում է ապացուցված, եթե դատարանը հավաստիանում է դրանց ընդունման *անհրաժեշտությանը և բավարարությանը*²: Նշենք նաև, որ դիմողն իրավունք ունի ներկայացնել իր դիրքորոշումը հիմնավորող ցանկացած փաստաթուղթ կամ այլ ապացույց: Այսինքն՝ ապացույցների շրջանակը բավականին ընդլայնված է, իսկ գործընթացը՝ պարզեցված: Իսկ առանձին բնույթի հայցապահանջներով դիմողներն ընդհանրապես ազատված են միջնորդության հիմնավորվածությունը ապացուցելու պարտականությունից, և գործում է հիմնավորված լինելու կանխավարկածը (օրինակ՝ եթե գործը վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությանը, արտոնագրային իրավունքին, ապրանքային նշաններին):

Ռուսական քաղաքացիական և արբիտրաժային դատավարության տեսության մեջ գերիշխող է այն կարծիքը, որ դիմողի կողմից պետք է ապացուցվի հայցի ապահովման միջոցներ չկիրառելու դեպքում իր համար բացասական հետևանքների առաջացման բարձր հավանականությունը: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Վ. Յարկովը, հայցվորը պարտավոր չէ ապացուցել, որ պատասխանողը կարող է թաքցնել իր գույքը կամ դրամական միջոցները. հայցի ապահովման միջոցներ ընդունելիս բավարար է հիմնավորումն այն մասին, որ պատասխանողի կողմից առկա է նման գործողություններ կատարելու վտանգ³:

Գերմանացի տեսաբանները քննարկվող երկու կատեգորիաները դիտարկում են միմյանցից առանձին: Նման մոտեցումը, մեր կարծիքով, արդարացված է, քանի որ հայցի ապահովման միջոցների ընդունման անհրաժեշտության ապացուցումը չի կարող ներառվել «միջնորդության հիմնավորումներ» եզրույթի մեջ: Հայցի ապահովման միջոցների ընդունումը կարող է հիմնավորված լինել նույնիսկ այն դեպքերում, երբ դիմողի փաստարկները չեն բխում որոշակի ապացույցներից, քանի որ մի շարք դեպքերում նույնիսկ ինչ-որ ապացույց ներկայացնելը կարող է օբյեկտիվորեն անհնար լինել, իսկ վեճի և իրավահարաբերության բնույթը կարող է թույլ տալ եզրահանգումներ կատարել ներկայացված միջնորդության բավարարման խիստ անհրաժեշտության մասին:

Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի⁴ 920-րդ պարագրաֆի համաձայն՝ իրավունքների պաշտպանության նախնական միջոցների մասին միջնորդությունը անպայմանորեն պետք է ցույց տա նման միջոցների ընդունման

¹ Տե՛ս Ռուսաստանի Ղաշնության Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումի 9.12.2002 թ. որոշումը՝ «О некоторых вопросах, связанных с введением в действие Арбитражного процессуального кодекса Российской Федерации», ինչպես նաև ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետեր, URL: http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_37800/, ընդունել է 14.06.2002 թ.:

² Տե՛ս **Волченко О.**, Доказывание оснований принятия мер по обеспечению иска в гражданском процессуальном праве России и Германии, Труды Института государства и права Российской академии наук, N 2/2011, էջ 105:

³ Տե՛ս Гражданский процесс: Учебник, под ред. **Яркова В.**, Москва, «Волтерс Клувер», 2009, էջ 64:

⁴ Տե՛ս **Գերմանիայի Ղաշնային Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրք**, ընդունվել է 05.12.2005, URL: https://www.gesetze-im-internet.de/englisch_zpo/englisch_zpo.html:

հիմնավորումը: Դոկտորինայի և իրավակիրառ պրակտիկայի համաձայն՝ նման հիմնավորումը պետք է պայմանավորված լինի կոնկրետ փաստական հանգամանքներով, ինչպիսիք կարող են հանդիսանալ, օրինակ, պարտապանի վարքագիծը, վերջինիս գույքային ծանր դրությունը և այլն: Գերմանական իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ «պարտապանի վարքագիծ» եզրույթի տակ պետք է հասկանալ վեճի առարկա հանդիսացող գույքը թաքցնելու փորձերը գույքի օտարման կամ այն երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնելու ճանապարհով:

Ռուսաստանի Ղաշնության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ևս հստակ չի նշում այն դեպքերը, որոնք կարող են վկայել հայցի ապահովման միջոցների կիրառման անհրաժեշտության մասին: Մ. Ա. Տիմոնովը նշում է, որ որպես այդպիսի հանգամանքներ կարող են դիտվել, այդ թվում, պարտապանի կողմից պարտավորությունը կատարելուց խուսափելու հաճախակի դրսևորումները, նախկինում վերջինիս ոչ բարեխիղճ վարքագիծը նմանատիպ իրավիճակներում, պարտապանի ֆինանսական ծանր դրությունը, վեճի առարկա գույքի վնասված լինելը: Այնուհետև հեղինակն ավելացնում է, որ դիմողի փաստարկների մեծ մասը հավանական է¹:

Հայցի ապահովման միջոցների հիմքերը քննարկելիս անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել նաև ՀՀ ՔՂՕ-ի 129-րդ հոդվածի 3-րդ մասին, որը սահմանում է կիրառվող հայցի ապահովման միջոցների, ներկայացվող հայցապահանջի և հետապնդվող նպատակի **համաչափությունը**: Մեր գնահատմամբ՝ յուրաքանչյուր դեպքում խնդրարկվող հայցի ապահովման միջոցի հիմնավորվածության հարցը քննարկելիս դատարանը պարտավոր է գնահատել վերջինիս համաչափության հարցը՝ որպես միջնորդության հիմնավորվածության պահանջի անհրաժեշտ տարրերից մեկը:

Օրենսդիրը չի սահմանել նման համաչափության ո՛չ հասկացությունը, ո՛չ գնահատման չափանիշները: Կարծում ենք՝ նման մոտեցումը լիովին արդարացված է, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հայցի ապահովման միջոցների համաչափության հարցը դատարանը պետք է գնահատի գործի բոլոր հանգամանքներն ինչպես առանձին-առանձին, այնպես էլ իրենց համակցության մեջ:

Ա. Վ. Յուդինն իրավացիորեն ուշադրություն է դարձրել այն դեպքերի վրա, երբ անբարեխիղճ դիմողի պահանջը կարող է ուղղված լինել ոչ միայն ստանալու իր հայցի առարկան (որը կարող է ամբողջությամբ հիմնավորված լինել), այնպես էլ «քաղելու ինչ-որ այլ բարիքներ»²:

Ռուսաստանի Ղաշնության քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ գոյություն ունի արմատապես միմյանցից տարբերվող երկու տեսակետ համաչափության մասին: Առաջին տեսակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցի համաչափություն ասելով հասկացվում է հայցի ապահովման միջոցի մեծության համեմատությունը (հավասարությունը) հայցապահանջի հետ, այսինքն՝ արժեքային հստակ համեմատությունը: Այս տեսակետի կողմնակիցները «համաչափություն» եզրույթը մեկնաբանում են տառացի:

Մյուս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ հայցի ապահովման միջոցների համաչափության տակ պետք է հասկանալ դատարանի կողմից այնպիսի միջոցների ընդունումը և այն ծավալով, որ դրանք համապատասխանեն հայցվորի պահանջի բնույթին և էությանը, իսկ դրա համար միայն մաթեմատիկական հավասարեցումը բավարար չէ: Այսինքն, «համաչափություն» եզրույթը մեկնաբանվում է

¹ Տե՛ս **Тимонов М.**, Особенности применения обеспечительных мер в арбитражном процессе, дисс. канд. юрид. наук, Санкт-Петербург, 2006, էջ 104:

² Տե՛ս **Юдин А.**, Злоупотребление процессуальными правами в гражданском судопроизводстве, Санкт-Петербург, 2005, էջ 67:

լայն իմաստով՝ ներառելով ոչ միայն դրա քանակական, այլ նաև որակական ասպեկտները:

Զենք կարող չնշել նաև Ի. Ն. Լուկյանովայի տեսակետը, որը կարևորել է, որ հայցի ապահովման միջոցներ կիրառելիս պետք է ուշադրություն դարձնել այն հարցին՝ արդյոք այդ միջոցը միակ հնարավորն է, թե գոյություն ունի այլ միջոց, որն ունակ է ավելի քիչ վնասներ պատճառել այն կողմին, ում հետ կապված հարաբերություններում այն ընդունվում է¹:

«Ետաքրքրական է Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի օրինակը, որտեղ համաչափության պահանջ ներկայացված է միայն գույքի վրա արգելանք դնելու դեպքերին, այսինքն՝ երբ հնարավոր է դրամական գնահատական տալ. մյուս միջոցներին համաչափության պահանջ չի ներկայացվում: Փոխարենը, Գերմանիայում դատավորները պաշտպանության միջոցների ընդունման հարցը քննարկելիս առավելապես կարևորում են **վեճի կողմերի իրավունքների և շահերի հավասարակշռության պահանջը**: Նշված պահանջը թեև նախատեսված է Գերմանիայի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ, սակայն ձևավորվել է դոկտրինայում և մեծ կիրառություն ունի նաև դատական պրակտիկայում: Վեճի կողմերի շահերի հավասարակշռության պահանջը նշանակում է, որ դատարանները իրավունքների պաշտպանության նախնական միջոցների կիրառման միջնորդությունները քննարկելիս հարաբերակցության մեջ են դիտում դիմողի իրավունքների խախտման բնույթը և ծավալը՝ նման միջոցներ չընդունելու դեպքում, և հակադիր կողմի իրավունքների հնարավոր խախտման դեպքերը՝ նման միջոցներ ընդունելու դեպքում: Ընդ որում, նման վնասները կարող են լինել ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային: Այսինքն՝ Գերմանիայի դատական պրակտիկան շարժվել է այն ուղղությամբ, որ պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն դիմողի, այլ նաև հակառակ կողմի շահերի վրա՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատելով այն հարցը, որ նման միջոցների ընդունման արդյունքում մյուս կողմի իրավունքների և շահերի խախտման հետևանքները չլինեն զգալի չափով ավելի շատ, քան դրանք կլինեին դիմողի համար, եթե այդպիսի միջոցներ չընդունվեին: Ինչպես նշում են գերմանացի դատավարագետները, կողմերի շահերի հավասարակշռման պահանջի խախտումը հիմք է դատարանի որոշումը վերացնելու համար:

Շարունակելով համաչափության պահանջի շուրջ ձևավորված դիրքորոշումների քննարկումը՝ կարծում ենք, որ գերմանական դոկտրինայում «վեճի կողմերի իրավունքների հավասարակշռման» պահանջը «համաչափության» պահանջի դրսևորման յուրահատուկ ձև է: Մենք գտնում ենք, որ չպետք է նախապատվությունը տալ համաչափության պահանջի ո՛չ քանակական և ո՛չ էլ որակական ասպեկտներից որևէ մեկին՝ դրանք մշտապես գնահատելով համակցության մեջ: Ընդ որում, որակական ասպեկտը պետք է դիտարկել մի քանի տեսանկյունից՝ հայցի առարկայի հետ փոխադարձ կապի, կողմերի շահերի, հնարավոր վնասների հավասարակշռման և հարաբերակցության, մասնավորապես հաշվի առնել այն հետևանքները, որոնք կառաջանան մի դեպքում դիմողի համար միջնորդությունը չբավարարվելու արդյունքում, մյուս դեպքում՝ պատասխանողի համար նման միջոցները կիրառելիս: Կարծում ենք, որ հայցի ապահովման միջոցները չեն կարող ընդունվել այն դեպքում, երբ դրանք մյուս կողմին պատճառելու են անհամաչափ վնասներ, այսինքն՝ հնարավոր բացասական հետևանքների չափը մյուս կողմի համար չի կարող գերազանցել ներկայացված հայցապահանջի չափը:

¹ St`u **Лукьянова И.**, О некоторых проблемах применения обеспечительных мер в арбитражном процессе, Судебно-арбитражная практика Московского региона // Вопросы правоприменения, N 3, 2005:

Փորձենք ասվածը հիմնավորել նաև օրինակով: Այն դեպքում, երբ ներկայացվել է գումարի բռնազանձման պահանջ, կարծում ենք, համաչափ չի կարող համարվել արգելանքի կիրառումը պարտապանի տրանսպորտային միջոցների վրա այն դեպքում, երբ վերջինս բեռնափոխադրումներ կամ ուղևորափոխադրումներ իրականացնող մասնագիտացված կազմակերպություն է: Գտնում ենք, որ քննարկվող իրավիճակում կարող է համաչափ համարվել արգելանքի կիրառումը, սակայն հատուկ նշելով, որ չի արգելվում վերջիններիս օգտագործումը: Նշենք նաև, որ քննարկվող սկզբունքի պահպանման նպատակը հետապնդելով է հենց օրենսդիրը «Ղատական ակտերի հակադիր կատարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրել իրավաբանական անձի գույքի նկատմամբ արգելանքներ կիրառելու հերթականությունը՝ նպատակ ունենալով էական խոչընդոտներ չստեղծել վերջինիս բնականոն գործունեության համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել.

1. դատավարության մասնակցի կողմից դատարան ներկայացվող հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է իմպերատիվ ձևով պարունակի նշում հայցի ապահովման միջոցի համապատասխան տեսակի մասին, որն անհրաժեշտ է, ըստ դիմողի, կիրառել ինստիտուտի առջև դրված նպատակներին հասնելու համար, ինչպես նաև բովանդակի անհրաժեշտ հիմնավորումներ:

2. «միջնորդության հիմնավորվածություն» եզրույթը պետք է կազմված լինի նվազագույնը հետևյալ տարրերից՝ այն փաստարկների մատնանշումը, որոնք վկայում են դատական ակտը կամավոր կատարելու անհնարինության, միևնույն ժամանակ հարկադիր կատարման փուլում հնարավոր վտանգների մասին, հիմնավորումներ հայցի ապահովման միջոցի, հայցի առարկայի փոխկապվածության և կիրառվող միջոցների համաչափության մասին՝ երկու կողմերի իրավունքների հավասարակշռության հաշվառմամբ. խոսքը դատական ակտի չկատարման բարձր հավանականության մասին է:

3. առանձին դեպքերում, երբ դատարանը ներկայացված հայցը գնահատում է ակնհայտ անհիմն, պետք է մերժի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը:

4. միջնորդություն ներկայացնելու փուլում դիմողի վրա չպետք է դնել չհիմնավորված ծանր բեռ՝ ներկայացնելու ապացույցներ միջնորդությունը հիմնավորելու համար, քանի որ նման ապացույցների ներկայացումը գործնականում, կարծում ենք, որպես կանոն հնարավոր չէ:

ОСОБЕННОСТИ ХОДАТАЙСТВА О ПРИМЕНЕНИИ МЕРЫ ПО ОБЕСПЕЧЕНИЮ ИСКА В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Григорян Гоар

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

Данная статья посвящена институту обеспечения иска, в частности основаниям принятия таких средств. Это исследование основано на аналитических и сравнительных методах. Учитывая важную роль и значение этого института, целью данной статьи является более глубокое изучение особенностей ходатайства о принятии предусмотренных законом средств обеспечения иска. Мы изучили отечественное законодательство и теоретические источники, ознакомились с законодательными актами других стран и взглядами их авторов.

FEATURES OF PETITION FOR TAKING THE MEANS OF SECURING A CLAIM IN CIVIL PROCEDURE

Gohar Grigoryan

PHD Student of the YSU Chair of Civil Procedure

This article is devoted to the institution of securing a claim, in particular to the grounds for taking such means. This research is based on analytical and comparative methods. Taking into account the important role and significance of this institution, the purpose of this article is to study in more depth the features of petition for taking the means of securing a claim provided by law. We studied the domestic legislation and theoretical sources, got acquainted with the legislative regulations of other countries and the views of their authors.

Բանալի բառեր – քաղաքացիական դատավարություն, հայցի ապահովում, հայցվոր, պատասխանող, միջնորդություն, միջոցներ, առերևույթ

Ключевые слова: гражданский процесс, обеспечение иска, истец, респондент, ходатайство, меры, по первому виду

Key words: civil procedure, securing a claim, plaintiff, respondent, petition, means, prima facie